ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 հոկտեմբերի 2026թ.

Ժամը 14:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Տարոն Վարդանյան

Անդամներ՝ Տիգրան Ղազարյան, Հայկ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետի և սկսելու մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով 15.10.2026թ.-ին հայտարարված էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 26.10.2026թ-ին ժամը 10:30-ին, իսկ էլեկտրոնային աճուրդը սկսվել է 27.10.2026թ.-ին ժամը 10:30-ին:

2. Գնման հայտով սահմանված գնման առարկաների քանակը և գինը.

Չափաբաժնի հ/հ	Անվանումը	Հաստատված քանակը	Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/
1	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների	1	4.000.000

3. Էլեկտրոնային աճուրդի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

3.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդին մասնակցել է թվով 1 մասնակից.

Հ/Հ	Մասնակցի անվանումը /անունը/	ՀՎՀՀ	Հասցե	Հեռախոս
1	«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ	00402063	Ք. Երևան, Խորենացու 160	010-57-35-90

3.2. Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած Մասնակից «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի գնման հայտը գնահատել անբավարար: Մասնավորապես՝ «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի գնման հայտում Հավելված 1.3-ում՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0

4.Տեղեկություններ հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԾՁԲ-27/1» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ պարզաբանումներ և հարցումներ չեն եղել:

5. Մասնակցի գնային առաջարկները.

5.1. Ստորև ներկայացվում են մասնակցի կողմից առաջարկված նախնական և վերջնական գնային առաջարկները.

Չափաբաժնի համար	Ջբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ	4000000	4000000	0 %	4000000	3960000	0 %	3960000

6. Ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված գնման հայտի անհամապատասխանությունները շտկելու մասին.

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և վերոհիշյալ Մասնակցնին տալ շտկման հնարավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի նշանակման մասին.

7.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել շտկման վերջնաժամկետը լրանալուց հետո՝ նույն օրվա ընթացքում:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Տ. Վարդանյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Հ.Հովհաննիսյան**

_____ **Տ. Ղազարյան**